

Սիրելի բարեկամ,

Տեսակաւոր տագնապներով լի տարի մը եղաւ 2020- 2021-ը, սակայն, փառք Աստուծոյ, կրցանք յաղթահարել զանոնք նուազագոյն վնասներով: Դպրոցէն երկար բացակայութենէ ետք, 27 Սեպտեմբերին սկսանք 2021-2022 տարեշրջանը՝ հնգօրեայ ֆիզիքական ներկայութեամբ, որ մեր ապրած տակնուվրայ եւ անորոշ կացութեան հաղորդեց կանոնաւորութիւն:

Երկու տարիէն պիտի լրանայ մեր դպրոցին առաջին դարը: Բառը մեծ է. մէկ դար՝ հարիւր տարի: 1923-ին լիբանանահայութեան կացութիւնը այսօրուրէն շատ տարբեր չէր. բազում էին անորոշութիւնները, անյստակ էր ապագան: Սակայն մեր պայծառատես հիմնադիրները կրցան Այսօրը անտեսել եւ Վաղուան վրայ կեդրոնանալ: Կ'աղօթենք որ Ամենակալ Աստուած մեզ ալ օժտէ հիմնադիրներուն աննկուն հաւատքով, դիմացկունութեամբ եւ հեռատեսութեամբ, որպէսզի իրենցմէ մեզի կտակուած այս հաստատութիւնը պահենք ու պահպանենք, ու անոր առաքելութիւնը նոր ժամանակներու նոր տեսիլքներով օժտելով՝ զայն յանձնենք յաջորդ հարիւրամեակին:

Սիրով՝

ԲԱՐԵՐԱՐ ՌԱՖՖԻ ՄԱՆՈՒԿԵԱՆ 25,974 ԱՄ. ՏՈԼԱՐ ՆՈՒԻՐԵՑ ՀԱԳ-Ի ԱՆՁՆԱԿԱԶՄԻՆ

Հայ ԱԼԵՏ. Գոլէճը ուրախութեամբ կը յայտնէ, թէ դպրոցի երկարամեայ նախկին աշակերտներէն բարերար տիար Ռաֆֆի Մանուկեան 25,974 կանխիկ ամերիկեան տոլարի նուիրատութիւն մը կատարեց դպրոցի անձնակազմին կարիքներուն հասնելու՝ Լիբանանի տնտեսական տագնապի այս ծանր շրջանին:

Մեծապէս կը գնահատենք մեծարգոյ բարերարին այս ազնուական ժեսթը եւ իր հարազատ դպրոցին նկատմամբ շարունակական եւ դրական հոգածութիւնը ու կը յայտնենք մեր խորին շնորհակալութիւնները:

ԲԱՐԵՐԱՐ ՀՐԱՉ ՍԻՍԵՌԵԱՆԻ 100,000 ՏՈԼԱՐԻ ՆՈՒԻՐԱՏՈՒԹԻՒՆԸ

Երկարամեայ նախկին աշակերտ, փարիզաբնակ տիար Հրաչ Սիսեռեան, գերազանցելով իր նախորդ տարեկան յատկացումները, 2021-ին դպրոցին յատկացուց 100,000 տոլարի չէք մը, իր սիրեցեալ ծնողաց՝ Գեղամ եւ Ալիս Սիսեռեաններու բարի յիշատակին:

Հայ ԱԼԵՏ. Գոլէճը բարձրօրէն կը գնահատէ յարգելի բարերարին ազնիւ ժեսթը եւ շնորհակալութիւն կը յայտնէ՝ լաւագոյն բարեմաղթութիւններով:

ՅԻՍՈՒՍ ԲՐԻՍՏՈՍԻ ԾՆՆԴԵԱՆ ՏՕՆԸ ՕՐՀՆԱԲԵՐ ԸԼԼԱՅ ՁԵՐ ՏՈՒՆԵՐԸ ՈՒ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՆԵՐՍ



ՈՒ

ՆՈՐ ՏԱՐՈՒԱՅ ՄԵՆ ՄԻ ՕՐԸ ԴԱՌՆԱՅ
ՄԵՐ ՅՈՅՍԵՐՈՒ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՌԻԹ

2021 - 2022 ՏԱՐԵՇՐՋԱՆԻ ՎԵՐԱՄՈՒՏ



Աստուծոյ շնորհքով 27 Սեպտեմբերին Հայ Աւետարանական Գոլէճը սկսաւ իր 99-րդ կրթական տարեշրջանը 108 աշակերտով, որոնցմէ 18-ն նորեկ:

Առաջին օրը սկսաւ պաշտամունքով, որ առաջնորդեց տիկին Հռութ Եունիսէս: Աստուծոյ պատգամը փոխանցեց եկեղեցւոյ նորանշանակ հովիւ պատու-

ի ժիրայր Ղազարեան: Ապա բակին մէջ տեղի ունեցաւ պաշտօնական բացում, ուր քայլերդներու երգեցողութենէն ետք ներկաները գլուխ խոնարհեցին մէկ տարի առաջ սկսած արցախեան պատերազմի նահատակներու յիշատակին: Տնօրէնը բարի գալուստի եւ քաջալերանքի խօսք ուղղեց աշակերտնե-

րուն, նշելով որ անոնք են որ դպրոցին կու տան ոգի եւ 99-ամեայ տեսիլքը իրականացած կը մնայ իրենց շնորհիւ:

Ծնողաց եւ Տիկնանց օժանդակ մարմիններու հիւրասիրութիւնը վայելելէ ետք աշակերտները ուղղուեցան դասարաններ, ուր ուսուցիչներ անոնց տուին ցուցումներ:

Արաբական Ծոցի Աստուածաշունչի ընկերութիւններու ընդհանուր քարտուղար դոկտ. Հրայր Ճէպլճեանէն շնորհակալութեամբ ստացանք նորատիպ «Մանուկներու բացատական Աստուածաշունչ»-ի օրինակներ՝ նախակրթարանի աշակերտներուն համար: Գիրքերը արդէն սկսան գործածուիլ դասարաններու մէջ եւ մեծ ընդունելութիւն գտան մանուկներուն կողմէ, քանի որ զիրենք հետաքրքրող զանազան նիւթերու անդրադարձ կայ այնտեղ, ինչպէս նաեւ պատասխաններ՝ զիրենք յուզող հարցերու:



ԱՄԱՆՈՒՐԵԱՆ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆ



ՄԱՆԿԱԴԱՐՏԵԶԻ ՓՈԽԱԴՐՈՒԹՅՈՒՆ



Դպրոցի եւ Հայ աւետ. առաջին եկեղեցիի պատասխանատուներուն որոշումով մեր մանկապարտէզը երրորդ յարկէն փոխադրուեցաւ աւելի ընդարձակ երկրորդ յարկ: Պայթումին հետեւանքները վերացնելէ եւ անհրաժեշտ նորոգութիւնները կատարելէ ետք մեր մանուկները աւելի բարեկարգ միջավայրի մէջ կը շարունակեն իրենց դասերն ու խաղերը:



Նիթական պատճառներով չամբողջացաւ արտաքին բակի շինարարութիւնը, որուն նորոգութիւնն ու կահաւորումը, ըստ մասնագէտին, կ'արժէ 3000-3500 ամերիկեան տոլար: Կոռ Կ'ՈՒՂ-ՂԵՆՔ ՄԵՐ ԲԱՐԵԿԱՄԵՐՈՒՆ ԵՒ ՇՐՋԱՆԱԿԱՐՏՆԵՐՈՒՆ, ՈՐ ՕԺԱՆԴԱԿԵՆ ԱՅՍ ԾՐԱԳՐԻՆ, ՈՐՊԵՍԶԻ ՄԻՆԶԵԻ ԳԱՐՈՒՆ ԿԱՐԵԱՆՔ ՄԵՐ ՍԻՐԱՍՈՒՆ ՁԱԳՈՒԿՆԵՐՈՒՆ ՅԱՏԿԱՑՆԵԼ ԲԱՅՕԹԵԱՅ ԽԱՂԱԿԱՅՐ ՄԸ՝ ԲԱՐԵԿԱՐԳ ՈՒ ԱՊԱՀՈՎ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՎ:

Այս առթիւ նուիրատուութիւնները կարելի է փոխանցել ուղղակի դպրոցի հաշիւին՝ ել-մակով (secretary@aecbeirut.edu.lb կամ principal@aecbeirut.edu.lb) կամ այլապէս տեղեկացնելով այդ մասին:

BANK MED S.A.L., SPEARS BRANCH, BEIRUT-LEBANON
SWIFT CODE: MED LLBBX
US\$ acc. # 02.400.301.457.XF

► ԿԱՄՈՒՐՁՆԵՐ

Դպրոցի հոգաբարձության որոշումով 2021-22 տարեշրջանի նշանաբան ընտրվեցավ «**Վերականգնենք հին կամուրջները եւ կառուցենք նորեր**» խօսքը: Իրաքանչիւր ամիս պիտի նուիրուի նոր կամուրջի մը: Նոյեմբեր ամսու կամուրջը «**դէպի հայերէն**»-ն էր: Տարբեր տարիքի աշակերտներ հայերէնի ուսուցիչներուն եւ Հայկական ակումբի նախաձեռնութեամբ զանազան գործունէութիւններով, այցելութիւններով եւ քննարկումներով մտորեցին ու արժեւորեցին մայրենի լեզուի հանդէպ իրենց կապը: Հետաքրքրական պատկերներ կայացուց առցանց հարցախոյզը որուն մասնակցեցան երկրորդականի աշակերտները, որուն արդիւնքը ամփոփ կը ներկայացնենք ստորեւ.

ՀԱՅԵՐԵՆԸ ՈՐՔԱՆ ԿԱՐԵՐՈՐ Է ՔԵԶԻ ՀԱՄԱՐ

Շաբ կարելոր	80%
Կարելոր	16,7%

ԻՆՔՆՈՒԹԵԱՆԴ ՔԱՆԻ՝ ՏՈԿՈՍԸ ՄԱՅՐԵՆԻ ԼԵՋՈՒԴ Է

Հարիր առ հարիր	50%
Ութսուն առ հարիր	33%
Վաթսուն առ հարիր	13%

ԻՆՔԶԻՆՔԴ ՈՐՔԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԿԸ ԶԳԱՍ ՀԱՅԵՐԵՆԻ ՆԿԱՏՄԱՐԲ

Շաբ	73,3%
Քիչ	23,3%

ՀԱՅԵՐԵՆԸ ՅԱԶՈՐԴ ՍԵՐՈՒՆԴԻՆ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԿԸ ԶԳԱՄՍ

Շաբ	86,7%
Ոչ-շաբ	13,3%



► ԲԱՐԵՍԻՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹԻՒՆ

Շուկտացի ու գերմանացի խումբ մը ուսանող ճարտարապետներ՝ Շուկտի Շալմար համալսարանէն եւ «Նուսանէտ» (արբ.՝ «կ'աջակցինք») կազմակերպութիւնը գեղեցիկ եւ շահեկան գործակցութիւն մը ունեցան նախակրթարանի մեր աշակերտներուն հետ, առաջնորդութեամբ տիկին Յասմիկ Տէմիրճեանի եւ օրիորդ Շադիկ Բարսեղեանի: Առաջին փուլին աշակերտները մասնակցեցան վարժանիստերու, ապա նկարչութեամբ արտայայտեցին բացօթեայ ժամանցի իրենց երազները: Աւելի ուշ, նոյն կազմակերպութիւնը եւ այլօր Պուրճ Համուտի մէջ հաստատեցին փոքրիկ խաղավայր մը, որուն գեղազարդումը եւ բոյսերու ցանումը կատարեցին մեր աշակերտները:

Կազմակերպիչները հետեւեալ վկայութիւնը թողուցին մեր աշակերտներուն մասին. “We would like to extend a warm thank you for all of your contributions throughout this semester, they have all had an impact on the project and without the interest you all have shown in us and our project it would not be what it turned out to be”.



ԱՆՊՈՍ



↖ Հայկազեանէն մասնագիտական արեւելում

↗ Մանկապարտեզի վերամուտ

↓ Լիբանանի անկախութիւն



↙ Բացօթեայ գործունէութիւն

↘ Հայկական ակումբի այցելութիւնը Մարալ Մանիսի ցուցահանդէսին





8 Հոկտեմբեր 2021-ին, Վատիկանի մեջ, Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Բ. հանդիպում մը ունեցաւ Ֆրանչիսկոս պապին հետ: Անոր ընկերացողներուն մէջ էր ՀԱԳ-ի երկարամեայ աշակերտ, Սօտեռնա ընկերութեան հիմնադիր տնօրէն, բարերար դոկտ. ՆՈՒՊԱՐ ԱՖԷԵԱՆ:



7 Հոկտեմբեր 2021-ին Արեւելեան Ամերիկայի առաջնորդարանը Ս. Վարդան մայր եկեղեցիի Գաութքեան սրահին մէջ մեծարեց Նիւ Եորքի ֆիլիարմոնիք նուագախումբի նորանշանակ տնօրէն եւ խմբավար մաէսթրօ Կոնստանտին Օրբելեանը: Ձեռնարկը կազմակերպուած էր տիկ. ՇՈՂԱԿ ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆԻ (1963-ի շրջ.) եւ դաշնակահար Շահան Արծրունիի նախաձեռնութեամբ:




14 Հոկտեմբեր 2021-ին լոյս տեսաւ ՀԱԳ-ի պատուակալ տնօրէն, պատմաբան դոկտ. ԶԱԻԷՆ ՄՍԸՐԼԵԱՆԻ (1955-ի շրջ.) նոր գիրքը՝ Studies and Documents on the Armenian Question and Genocide, մեկենասութեամբ ՀԱԳ-ի երկարամեայ նախկին աշակերտ եւ բարերար ՌԱՖՖԻ ՄԱՆՈՒԿԵԱՆԻ:



Սեպտեմբեր 2021-ին օրդ. ՔՐԻՍԹԻՆ ՇԱՀԻՆԵԱՆ (2014-ի շրջ.) Ամերիկայի ազգային խորհուրդի (Armenian Council of America) Երեւանի գրասենեակի ծրագիրներու տնօրէն նշանակուած է:



Պր. ՏԱՐՕՆ ՏԷՐ ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ (1978-ի շրջ.) Արեւմտեան Ամերիկայի ՀՅԴ կառոյցի 55-րդ շրջանային ժողովին (Յուլիս 2021) ընտրուած է կեդրոնական կոմիտէի անդամ եւ ապա ներկայացուցիչ:




Փրոֆ. ՀԵՂՆԱՐ ԶԷՅԹ. ԼԵԱՆ ՈՒԱԹԵՆՓԱ (1986-ի շրջ.) «Ազդակ» օրաթերթի 14 Հոկտեմբեր 2021-ի առցանց լսարանին խօսած է «Հայկական մշակութային ժառանգութիւններուն քարտէսը այսօր» նիւթին շուրջ: Նախապէս՝ 11 Յուլիս 2021-ին, ան ելոյթ ունեցած էր Համազգային մշակութային ընկերակցութեան ֆորումին, որ կը նպատակադրէր ծանօթացնել Արցախի հայկական մշակութային արժէքները:

ՀՅԴ Լիբանանի 72-րդ շրջանային ժողովի աւարտին՝ 18 Յունիս 2021-ին, լոյս տեսած հաղորդագրութեան մէջ նշուած է որ կուսակցութեան Լիբանանի Կեդրոնական կոմիտէի անդամ ընտրուած է երկարամեայ նախկին աշակերտ տորթ. ԷԼԻ ԹԱՇՃԵԱՆ:



Օրդ. ԷՆԺԻ ՔԻՒՐԷՃԵԱՆ (2013-ի շրջ.) որոշ մրցակցային գտումներէ ետք Լիբանանի կեդրոնական դրամատան քննչական յանձնախումբի օգնական քննիչ ընտրուած է եւ հոն կը գործէ Մայիս 2021-էն սկսեալ:



Մեծի տանն Կիլիկիոյ կաթողիկոսարանի դիւանապետ, բանաստեղծ ԽԱՉԻԿ ՏԷՏԷԱՆ (1980-ի շրջ.) խօսք առած է 12 նոյեմբեր 2021-ին Համազգայինի Լեւոն Շանթ մշակութային կեդրոնին մէջ տեղի ունեցած դոկտ. Խաչատուր Ստեփանեանի «Հայաստանում խորհրդային իշխանութեան հաստատման հիմնահարցը սփիւռքահայ հասարակական-քաղաքական մտքի գնահատմամբ (1920-1930)» հատորի զինեմօսին:

Ամերիկայի հայ աւետարանչական ընկերակցութեան 102-րդ տարեկան համաժողովը տեղի ունեցաւ Ֆրեզնոյի Հայ պանդխտաց եկեղեցիին մէջ 23



Հոկտեմբեր 2021-ին նախագահությամբ տոքթ. ՆԱԶԱՐԷԹ ՏԱՐԱԳՃԵԱՆԻ (1970-ի շրջ.):



Լիբանանի անկախության տոնին՝ 22 Նոյեմբեր 2021-ին, հեռախոսով ելույթ ունեցավ ԶԱԻԷՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ (1987-ի շրջ.) սկսալ իր Townhall ծրագիրը, որ միաժամանակ պիտի սփռուի տարբեր կայաններէ:

Օրդ. ՅՈՒՇԻԿ ԳԱՅՄԱՔԱՄԵԱՆ (2015-ի շրջ.) Լոնտոնի Տնտեսական եւ քաղաքական գիտության համալսարանին մէջ մագիստրոսության միամեայ դասընթացներու հետեւելու համար Բրիտանական մայրաքաղաք մեկնեցաւ Մեպտեմբերին:

ՊՍԱԿ

Տոքթ. ՀՐԱԿ ԺԱՆՊԱԹԵԱՆ (2007-ի շրջ.) պատկուած է օրդ. Լիսա Կրամարովիչի հետ 17 Ապրիլ 2021-ին Պոսթընի Ս. Երրորդութիւն եկեղեցին մէջ:

ՄԱՀ



† 19 Հոկտեմբեր 2021-ին Նիւ Ճրրգի մէջ յանկարծամահ եղած է ՀԱԳ-ի ուսողութեան ուսուցչուհի (1960-62), իսկ հետագային Նիւ Եորքի մէջ յարգուած կրթական մշակ տիկ. ՕԼԻՄՓԻԱ ԹԱՊԻՊԵԱՆ ՃԵՊԵՃԵԱՆ (1940-2021):



† 11 Փետրուար 2021ին Պէյրութի մէջ պատկաճել ժահրի (Covid 19) հետեւանքներէն մահացած է 1961-ի շրջանաւարտ ԵՂԻԱ ՇԻՐԻՆԵԱՆ (1943-2021):

† Յապաղումով տեղեկացանք թէ 12 Յուլիս 2020-ին, Պէյրութի մէջ ողնայարի երկարատեւ հիւանդութեւնէ ետք մահացած է տիկ. ՍՐԲՈՒՀԻ ԹԱԳԻՈՐԵԱՆ ՔԷՇԻՇԵԱՆ (1938-2020) (1957-ի շրջ.):



Հոկտեմբեր 29-ը յատուկ օր էր ՀԱԳ-էն ներս: Այդ օր առաջին անգամ տեղի ունեցաւ Աշակերտական խորհուրդի ընտրութիւն՝ մասնակցութեամբ երկրորդականի աշակերտներուն: Քուէներու մեծամասնութեամբ յաղթեց Էլվիրա Զէյթունցեանի (12-րդ դաս.) ցանկը: Խանդավառ եւ ժողովրդավարական մթնոլորտ մը կը տիրէր դպրոցին մէջ ընտրութիւններուն նախորդող շաբաթը:

Աշակերտական խորհուրդը կը բաղկանայ հետեւեալներէն. ԷԿԻՐԱ ԶԵՅՈՒՆՅԵԱՆ (վարչապետ), ՓԱԹՐԻՍԻԱ ԱՊԱՃԵԱՆ (հաշուապահ), ՆՈՅՏԻ ՊՕՂՈՍԵԱՆ (12-րդ), ՄԱՐԻ-ԼՈՒԻՉ ՊՈՅՏՈՒՇԱՔԵԱՆ, ԵՈՒՍԷՑ ԵՈՒՆԷՆ (11-րդ), ՄԱՆԷ ՉՈԼԱԳԵԱՆ (քարտուղար), ՆԱՐԵԿ ՔԷՇԵԿԵՐԵԱՆ (10-րդ), ՍԷՐԼԻ ՀԱՍՏԱՏ (9-րդ), ԱԼԻՔ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ (8-րդ), ԱԼԵՔՍ ՃՈՁԻԿԵԱՆ (7-րդ):

Խորհուրդը արդէն կազմակերպեց երկու գործունէութիւն եւ ստեղծեց ու սկսաւ կահաւորել աշակերտներու «Հանգիստի ու ժամանցի սենեակ» մը (Chill room), ուր նաեւ պիտի ծաւալուի դասերու մէջ յաւելեալ հոգածութեան կարիք ունեցող փոքր աշակերտներու դասաւանդութիւն (tutoring)՝ մեծերուն կողմէ:

Եթէ շրջանաւարտներ եւ բարեկամներ փափաքին օգնել սենեակի կահաւորումին եւ գեղազարդումին, կը խնդրուի կապ պահել դպրոցին հետ:



ՆՈՒՐԱՏԻՈՒԹԻՒՆ

Պր. ԼԵՆՈՆ ՊԱՊԻԿԵԱՆԻ (2016-ի շրջ.) ջանքերով հաւաքուած է 1350 ամ. տողար, որ պիտի գործածուի դպրոցի Հայկական եւ Սբ. Գիորքի աշակերտական ակումբներու գործունէութիւններուն եւ մանկապարտեզի ճաշի ծախսերուն:

Այս ծիրէն ներս շնորհակալութիւն կը յայտնենք տեր եւ տիկին Ռազմիկ եւ Հուրի Եփրեմեաններուն, իրենց 500 տողարի նուէրին համար:

ՆՈՒՐԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«ԼՐԱՏՈՒ»-ի նախորդ թիվն է Վեր շնորհակալությամբ ստացանք հետևեալ նուիրատուությունները:

AMAA-ի ՄԻՋՈՑԱՐ

Շրջանաւարտ Շողակ Յովհաննէսեան 2500\$
Իր ամուսնոյն՝ տոքթ. Ռաֆֆի մահուան Ա. տարելիցին եւ դուկտ. Արա Թէքեանի տարե- դարծին առթիւ

Շրջանաւարտ Վիգէն Գրաճեան 2500\$
2020-2021-ի իր Ա. յատկացումը

Շրջանաւարտ Ժագ Ապաճեան 300\$

ՊԵՅՐՈՒԹ ԼԱՄԱՀԱՆԳԻՍՏԻ ԱՐԵՏԵՆ ԵՏԶ ԵՐԱՅ ԿՈՂԵՆ Ի ՊԱՏԱՍԽԱՆ

Տոքթ. եւ տիկ. Հրաչ եւ Սոնիա Տումանեան 2000\$
 Տիկ. Արփի Սարեան 1000\$
 Պր. Ռաֆֆի Արոշեան 500\$
 Տիկ. Անայիս Պարսումեան 500\$
 Պր. Անուշտ Պապիկեան 500\$
 Պր. Կերի Արթինեան 300\$
 Տիկ. Պերճուհի Կիլեսերեան 200\$
 Պր. Հայկ Զիւրքճեան 100 գ. տոլար

ՈՒՏՈՒՅՉԱԿԱԶՄԻՆ ԵՒ ՊԱՇՏՆԵՐՈՒԹԵԱՆ ՆՈՒԵՐ՝ ԱՅՐ ԱՌԹԻ ԵՐԱՅ ՅԱՏՈՒԿ ԿՈՂԵՆ ԵՏԶ

Պր. Ժիրայր Ֆրունճեան 500\$
 Տոքթ. Արմէն Կեօնճեան 500\$
 Պր. Արա Զիլինկիրեան 100\$

AMAA-ի ՅԱՏԱՑՈՒՄՆԵՐԸ

Դպրոցի անձնակազմին նուէր՝ Նոր տարուայ եւ Սբ. ծննդեան տօներուն առթիւ 4950\$
 Մայիս- Հոկտեմբեր 2021 6200\$

«Յատուկ կրթական յատկացում» 12870\$
 Ստեփան Փիլիպոսեան ֆոնտէն 7722\$
 Հայ աւետ. վարժարաններու յատուկ ֆոնտէն 7500\$

ՈՒՐԱԿԻ ԴՊՐՈՅԻՆ

Գալուստ Կիլպէնկեան Հիմնարկութենէն 5940 եւլրօ
 ՀԲԸՄ-ի «Չաւէն Մաքրլեան» մրցանակի գումարը 2486\$
որ պատուակալ տնօրէնին կողմէ դպրոցի կրթանպաստին յատկացուեցաւ

Հոգաբարձու տէր եւ տիկին Հրաչ Հասրճեան (կանխիկ) 1000\$

Նախկին աշակերտ՝ Սարգիս Սիմիթեան 2021-ի իր յատկացումը (չէք) 1000\$

Տիկ. Սօսի եւ պր. Արմէն Պալեան (կանխիկ) 100\$
 Մի ոմն (կանխիկ) 100\$

Վեր. եւ տիկ. Հրայր Զոլագեան 100,000 լ.ո.

ԿԱՐԻՔԱՒՈՐ ԱՇԱԿԵՐՏԵՐՈՒ ԿՐԹԱԹՈՇԱԿԻ ՅԱՏԱՑՈՒՄ 750,000-ԱԿԱՆ Լ.Ո.

Երկու ծնողք
 Դպրոցի բարեկամներ

Լոս Անճելըսի Հայ մայրերու եւ ուսուցչուհիներու միութիւնը դպրոցի բոլոր աշակերտներուն նուիրեց կաղանդէքեր եւ պարէնային օժանդակութիւն՝ կարգ մը ընտանիքներու:

Շնորհակալ ենք ազնիւ տիկիներէն իրենց այս բարի արարքին համար:



Խմբագիր՝ ՏՆՕՐԵՆ ՊՈԿՏ. ԱՐՄԵՆ ԻՐԱՆԵՐԵԱՆ
 Խորհրդատուներ՝ ՏԻՍԻ ՆԵՐՍԵՆ ՊԱՌՏՈՅԵԱՆ
 ՏԻՍԻ ՅԱԿՈԲ ՏԵՄԻՐՉԵԱՆ
 Էջադրում՝ ԱՍԻ ԲԵՍԵՆԵԱՆ ՊԱՍԵՐ
 Մ.Ա.Յ.Ա.Ե. ՄԻՈՒԹԵԱՆ ԶՐԱՏԱՐԱԿԱԶՄԱՆ ԳՐԱՍԵՆԵԱԿ

Y.M. PHILIBOSSIAN ARMENIAN EVANGELICAL COLLEGE
 P.O. Box 3672-Beirut
 Tel: 01 349 816 Fax: 01 751 469
 E-mail: A_E_C@cyberia.net.lb
 Website: aecbeirut.edu.lb
 Facebook: Armenian Evangelical College